ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՏՆՕՐԵՆ՝ ________ Բ. ՀԵԲՈՅԱՆ

________________2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## 2022-2023 ուսումնական տարի

Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան հ1 միջն. դպրոց

10-րդ դասարան

Հայկանուշ Ադամյան

# Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

## 1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)

*XI* դասարանում սովորում է 22 աշակերտ,9 տղա և 13 աղջիկ: Բոլորն էլ մեծացել և դաստիարակվել են առողջ և ապահով ընտանիքներում:

Աշակերտները ցուցաբերել են տարբեր կարողություններ,ընդունակություններ և հմտություններ: Կան աշակերտներ, իհարկե , որոնք ունեն թույլ կարողություններ, բավականին լուրջ բաց թողումներ ինչ-ինչ պատճառով:Աշակերտները ընկերասեր են,պատրաստակամ են և ուշադիր:

## 2.Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Կիրառել բոլոր մեթոդները ու հնարները աշակերտների մեջ սերմանելու, մշակելու և զարգացնելու սեր դպրոցի, ուսման, դպրոցական կարգ ու կանոնի նկատմամբ:

գ/ Հետևողական լինեն, որ դպրոցում հակահամաճարակային կանոնները խիստ պահպանվեն ուսուցման պրոցեսում:

դ/ Աշխատանք տանել ուսման որակը բարձրացնել, չլինեն անհարգելի բացակայություններ, ուշացումներ,ուշադրությամբ վերաբերվեն դպրոցական գույքին:

## 2. Հայեցի դաստիարակություն

Հոգևորդաստիարակությունը
այս տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այն նպատակ ունի բարոյական արժեքներ սերմանելու: Այդ իսկ պատճառով նախատեսվում է երեխաներին ծանոթացնել պատմամշակութային կոթողների հետ և սերմանել ազգապահպան մտածողությունը:

- Գեղագիտական դաստիարակությունը

Սերն ու հարգանքն է գեղեցիկի նկատմամբ: Մարդը դեռ վաղ հասակից սկսում է գնահատել իր շրջապատը և շրջապատող միջավայրն իր բոլոր դրսևորումներով: Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացման զգալի մասը:

**- Ռազմահայրենասիրական դաստիարակությունը**

Գրագետ, հոգևորապես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթաց է: Հետևաբար մեր առաջնահերթ խնդիրն է աշակերտների մեջ ձևավորել ռազմահայրենասիրական ոգի:Պատերազմական իրավիճակում առավել ևս ուշադրություն պետք է դարձնենք ռազմագիտություն առարկային:

**- Ֆիզիկական դաստիարակությունը**

Ուղղված է առողջության ամրապնդմանն ու պահպանմանը, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը: Այն իրենից ներկայացնում է մշակույթի մի մաս, որն ընդգրկում է մի շարք արժեքների ու գիտելիքների համադրում:

**- Աշխատանքայինդաստիարակություն**

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ միայն ազնիվ աշխատանքով կարող է վաստակել հանապազօրյա հացը: Աշակերտները պետք է պատրաստ լինեն հանրօգուտ աշխատանքի: Տունը, դպրոցում և ամենուր պետք է պահպանեն մաքրություն:

**- Բնապահպանական դաստիարակությունը <u>ոչ միայն գիտելիքների ձևավորում է, այլև գործնական կարողությունների զարգացումը:</u>**

Աշակերտներին զինել բնության պահպանության վերաբերյալ գիտելիքներով: Ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք: Ճանաչել և պահպանել բուսական և կենդանական աշխարհը:

**- Դպրոց-ընտանիք կապը**

Ամուր հիմքերի վրա դնել ,մասնակցել ծնողկոմիտեի հետ տարվող աշխատանքներին: Հրավիրել ծնողական ժողովներ, քննարկել ընթացիկ հարցեր: Անհրաժեշտության դեպքում կատարել տուն, այցելություններ: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են ապա հաղթանակն ապահոված է:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | 5. 09 | Ես կանգնած եմ մասնագիտության ընտրության շեմին | Աշակերտներին ուղղորդել ճիշտ մասնագիտության ընտրությանը: | | աշակերտ դասղեկ |
| 2. | 12. 09 | Հեռավար կրթության լավ և վատ կողմերը | Կկարևորեն կրթության անընդհատությունը: Կվերլուծեն,թե ինչ դրական և բացասական կողմեր ունի հեռավար կրթությունը: Քննադատական մտացողության ձևավորում: | | աշակերտ դասղեկ |
| | | Ուսուցիչ,ով նաև ընկեր է | Կարժևորեն այն մարդկանց,ովքեր կրթելու,դաստիարակելու ռեն սերունդներ: Կկարևորեն ուսուցչի դերը ոչ միայն կրթական, այլև դաստիարակչական գործընթացում: | | աշակերտ դասղեկ |
| | | Միասնականություն՝ բազմ ազանության մեջ | Կկարողանան ըմբռնել տարբերությունների նշանակությունը մարդկային հարաբերություններում: Կկարևորեն յուրաքանչյուրի եզակիությունը՝ հարաբերություններ կառուցելիս: | | աշակերտ դասղեկ,փոխ տնօրեն |
| | | Իրավունք և պարտականություն | Աշակերտները կվերլուծեն <<ազատություն>> և <<պատասխանատվություն>> հասկացությունները: Կգիտակցեն ազատության և ամենաթողության միջև եղած տարբերությունները: | | աշակերտ դասղեկ |
| | | Խաղաղ բանակցություններ | Միջանձնային հարաբերություններում կձևավորվի փոխհամաձայնության գալու հմտություններ: Կզարգանա տեղեկություններ տնօրինելու կարողություն: Կձևավորվի ակտիվ քաղաքական | | աշակերտ դասղեկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | դիրքորոշում: | | |
| | Իմ ամենաուրախ օրը | Երեխայի մեջ կձևավորվի սեփական զգացմունքները ազատ արտահայտելու կարողություն:Սեփական հույզերը արտահայտելու հնարավորություն: | | աշակերտ դասղեկ |
| | Մարդ ում կուզենայի նմանվել | Ձևավորում է դիմացինի մեջ գնահատել դրականը,փորձել ընդօրինակել և կատարելագործվել: | | աշակերտ դասղեկ |
| | Ինչպիսի՞ ընկեր եմ ես | Կզարգացնեի ինքնաքննադատական մտածողություն: Հնարավորություն կտա վերլուծելու սեփական արարքներ և կատարելագործվել: | | աշակերտ դասղեկ |
| | Ինչքանով եմ ընթերցասեր(որևէ սիրված գրքի քննարկում) | Յուրաքանչյուր անհատ՝անկախ մասնագիտությունից պետք է ընթերցի գեղարվեստական գրքեր,որպեսզի լիարժեք պատկերացում կազմի շրջապատող աշխարհի,բարու և չարի մասին: | | աշակերտ դասղեկ |
| | Նախանձ և չարություն | Կհասկանան,որ նախանձը փչացնում է մարդու կյանքը: Երբ հանգստությունը և ինքնավստահությունը քայլում են կողք - կողքի,մարդը չի նախանձում և չի չարանում:Պետք է սիրեք ձեզ և գնահատեք այնպիսին,ինչպիսին դուք եք: | | աշակերտ դասղեկ |
| | Ովքեր են իմ ընկերները | Կթվեն այն արժանիքները,որով պետք է օժտված լինի լավ ընկերը: Կկարողանան գնահատել այն ընկերներին,ովքեր ցանկացած պահին իրենց կողքին են: | | աշակերտ դասղեկ |
| | Տարեմուտի նախաշեմին | Ցանկացած տոն հաճելի զգացողություններ և հույզեր են արթնացնում: Կարտահայտվեն,թե արդյո՞ք այդ տարում կատարվել են իրենց երազանքներն ու | | աշակերտ դասղեկ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սպասելիքները: | | |
| | | Ինչ սպասելիքներ ունեմ 2023թ-ից | Երազանքի թերթիկի օգնությամբ տուփի մեջ կհավաքեն դասարանի երեխաների գրված թերթիկները,որը կբացվի 2023թ նախատոնական միջոցառման ժամանակ: | | աշակերտ դասղեկ |
| | | Անհանդուրժողականություն | Գործնականում կկիրառեն քննադատական մտացողությունը՝համադրելով ժողովրդական ասույթներն ու ասացվածքները: | | աշակերտ դասղեկ |
| | | Մարդու իրավունքները | Իրազեկության բարձրացում:Ստեղծագործական մտածողության,արդյունավետ շփման և համոզելու,կոնֆլիկտի լուծման հմտությունների զարգացում: | | աշակերտ դասղեկ |
| | | Հայոց բանակի օր | Եվս մեկ անգամ կկարևորի բանակի դերը մեր կյանքում:<br>Կհասկանան,որ առանց հզոր բնակի ոչ մի պետություն լիարժեք չի: | | աշակերտ դասղեկ |
| | | Խտրականություն | Կկարևորեն ընտանիքի դերը՝արժեքները փոխանցելու հարցում:<br>Կկարողանան վերլուծել արժեքները: | | աշակերտ դասղեկ |
| | | Միասնականության ուսուցանում | Կմրնեն ապրումակցման գաղափարը:<br>Կպարզաբանվի սպրումակցման նշանակությունը հասարակությունում: | | աշակերտ դասղեկ |
| | | Բարոյական արժեքներ | Աշակերտները կխոսեն սպազայի վերաբերյալ ունեցած հույսերի ու մտավախությունների շուրջ:<br>Օգտագործելով երևակայությունը,վերացական մտացողությունը՝կգիտակցեն երևույթների պատճառահետևանքային կապը: | | աշակերտ դասղեկ |
| | | Ընկալումների բազմազանություն | Կգիտակցեն,որ տարբեր ընկալումների արդյունքում միևնույն երևույթների կարող են տարբեր [illegible]: | | աշակերտ դասղեկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Դժվարություններ,որոնց բախվում եմ | Կոլեկտիվ քննարկման միջոցով վեր կհանվեն այն դժվարությունները,որոնց բախվում են դեռահասները:<br>Կքննարկվեն և կառաջարկվեն լուծման տարբերակներ: | | աշակերտ դաշեկ |
| | Ով է այն գրական կերպարը,որին ուզում եմ նմանվել | Կքննարկվեն գրական ստեղծագործությունների մի քանի դրական և բացասական կերպարներ: | | աշակերտ դաշեկ |
| | Ինչու՞ եմ ուշանում դասերից | Կքննարկվեն այն դրդապատճառները,որոնց պատճառով որոշ աշակերտներ ուշանում են դասերից:<br>Կքննարկվեն լուծման տարբերակներ: | | աշակերտ դաշեկ |
| | Իմ պատկերացումով՝ ի՞նչ է երջանկությունը | Կքննարկենք բոլոր կարծիքներն ու կընդհանրացնենք,թե ի վերջո ով է երջանիկ մարդը: | | աշակերտ դաշեկ |
| | Եթե հնարավորություն ունենայի ճամփորդել,որ երկիր կմեկնեի | Կարտայատվեն կարծիքներ,յուրաքանչյուրը մի քանի խոսքով կփորձի նկարագրել այն վայրը,ուր կուզեր լինել: | | աշակերտ դաշեկ |
| | Երեխայի իրավունքները | Սովորողները կհասկանան պետության և ծնողների պատասխանատվության փոխկախվածությունը երեխաների իրավունքների պաշտպանության հարցում: | | աշակերտ դաշեկ |
| | Էկոլոգիական հիմնախնդիրներ | Կքննարկեն բնության պահպանության հիմահարցեր,կառաջարկեն կարծիքներ և լուծման ուղիներ: | | աշակերտ դաշեկ |
| | Արտաքին գեղեցկություն,թե ներքին | Ազատ կարծիքների արտահայտում,մտքերի փոխանակում: | | աշակերտ դաշեկ |
| | Ի՞նչ կուզեի փոխել իմ դպրոցական առօրիայում | Յուրաքանչյուր աշակերտ կնակարգի այն քայլերի հաջորդականությունը,ըստ որի կկարևորվի իր դպրոցական առօրիան:<br>Կլինեն առաջարկներ և դիտողություններ:Առողջ քննադատական մթնոլորտ: | | աշակերտ դաշեկ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ի՞նչ մասնագիտություն եմ ուզում ընտրել | Կանեն քննարկումներ և առաջարկություններ:Կփոխանակվեն կարծիքներ,որի արդյունքում որոշ աշակերտներ կկատարեն մասնագիտության ճիշտ ընտրություն: | | դասղեկ |
| | | Վիրտուալ շփման լավ և վատ կողմերը | Կնշեն վիրտուալ շփման լավ և վատ կողմերը: Կփոխանակեն կարծիքներ,կանեն հետաքրքիր մեկնաբանություններ: | | աշակերտ դասղեկ |
| | | Մայիսյան հերոսամարտերն ու հերոսները | Կվերհիշեն մեր հերոսներին և իրենց կատարած հերոսությունները:Դա ոգեշնչող ու պարտավորեցնող իրավիճակ է յուրաքանչյուր աշակերտի համար: | | աշակերտ դասղեկ |
| | | Ինչպես եմ ավարտում ուսումնական տարին | Կխոսենք ձեռքբերումների և բացթողումների մասին:Կլինեն դիտողություններ և գովեստներ: | | աշակերտ դասղեկ |